ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/43

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ի և ներկայացուցիչ՝ Գ. Սանդալջյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, գրավոր թարգմանության /Տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու տեսական քննության հարցերի թարգմանություն/ ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 12.02.2021թ.-ի թիվ 26/26/1971-2021 գրությամբ «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 10.02.2021թ.-ի թիվ 3/27/7385 գրության հիման վրա, 12.02.2021թ.-ին «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 12.02.2021թ.-ին:

15.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ թիվ ՍՑ-ԼՕ-2021/43 համարի ծածկագիրը:

19.02.2021թ.-ին և 12.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.03.2021թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 10.02.2021թ.-ի թիվ 3/27/7385 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջների համաձայն, կից ներկայացվում է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 18.02.2020թ.-ի գրությամբ դիմել է «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.02.2021թ.-ի թիվ

26/26/1971-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 19.02.2021թ.-ին հրավիրված նիստին:

Մասնակիցը ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության 12.02.2021թ. թիվ 26/26/1971-2021 գրությամբ «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգի շրջանակներում հայտնում ենք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մասնակցի կարծիքը, այն է՝

Ա/Ձ Սոֆյա Սերոբյանը գործում է 2017 թվականից: 2020 թվականին առաջին անգամ մասնակցել ենք թարգմանչական ծառայությունների գնման հրապարակային մրցույթների, որոնք կազմակերպվել էին ՀՀ Քննչական կոմիտեի, ՀՀ Դատական դեպարտամենտի, ՀՀ Հատուկ Քննչական ծառայության կողմից: Մրցույթներում հայտերը ներկայացվել են փաստաթղթային տարբերակով, կնքել ենք պայմանագրեր և պատշաճ կերպով մատուցել ենք ծառայությունները: Սույն թվականին դարձյալ կազմակերպված հրապարակային բաց մրցույթների ենք մասնակցել և կնքել ենք պայմանագրեր ՀՀ Հատուկ Քննչական ծառայության և ՀՀ Դատախազության հետ: Աշխատանքները կատարել ենք բարձր որակով և պայմանագրային պայմաններին համապատասխան:

Սույն թվականի փետրվարի 05-ին առաջին անգամ փորձել ենք մասնակցել էլեկտրոնային եղանակով կազմակերպված գնման ընթացակարգին և հայտ ենք ներկայացրել ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ գնման ընթացակարգին, որը կազմակերպվել էր ՀՀ Ոստիկանության կողմից: Հայտը լրացրել ենք ինքնուրույն, առանց գնումների մասնագետի օգնության: Հայտերի բացման օրը ծանուցում ենք ստացել, որ անհրաժեշտ է կատարել շտկում և տրամադրել թարգմանիչների անձը և որակավորումը հաստատող փաստաթղթերը: Նույն օրը 17:30-18:00 ընկած ժամանակահատվածում պարբերաբար զանգահարել եմ ծանուցման մեջ նշված հեռախոսահամարով, որպեսզի կարողանանք ճշգրտել՝ արդյոք պահանջված փաստաթղթերը ներկայացվելու էին էլեկտրոնային եղանակով, առձեռն, թե վերբեռնվելու էին armeps համակարգ: Տվյալ հարցը առաջացել էր, քանի որ, առաջին անգամ հայտ ուղարկելով, տեղյակ չէինք հայտերի էլեկտրոնային բացման գործընթացին, իսկ 2020 թվականի նոյեմբերի 11-ին արդեն մեկ

անգամ փորձել էինք մասնակցել միևնույն ծառայության գնման մրցույթին և ներբեռնման հետ կապված տեխնիկական խնդիրների առաջացման պատճառով հայտի փաթեթը ուղարկել էինք հրավերում նշված էլեկտրոնային հասցեին: Ի պատասխան մեզ տեղեկացրել էին, որ հայտերի ներբեռնումը կատարվում է միայն armeps համակարգի միջոցով, ոչ էլեկտրոնային փոստին ուղարկման եղանակով:

Քանի որ հեռախոսազանգերին չէին պատասխանում և մեզ ուղարկված ծանուցման մեջ արդեն արձանագրված էր, որ Ա/Ձ Սոֆյա Սերոբյանը երկրորդ տեղում է գտնվում իր գնային առաջարկով, մենք որոշեցինք չներկայացնել նախապես պատրաստված փաստաթղթերի փաթեթը:

Նշեմ նաև, որ ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետը, այն է՝ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը /գ ենթակետը/ սահմանում է՝ «հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից», սա մենք ընկալել ենք հետևյալ կերպ, այն է՝ մասնակիցը հրաժարվում է մրցույթի գործընթացին հետագա մասնակցությունից, եթե գնային առաջարկով հաղթող է ճանաչվում, քանի որ չկա հստակ սահմանում այն մասին, որ բոլոր մասնակիցները պիտի շարունակեն մասնակցել գնման գործընթացին՝

«6) (…) Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

(…)»:

Մենք չենք ներկայացրել փաստաթղթերը՝ ենթադրելով, որ, ինչպես փաստաթղթային տարբերակով անցկացվող մրցույթների դեպքում, այնպես էլ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում, հավաստող փաստաթղթեր պարտավորվում է ներկայացնել այն մասնակիցը, ում գնային առաջարկով նվազագույն գին է սահմանվում:

Սա չի ենթադրում, որ մենք չէինք կարող ապահովել թարգմանության պատշաճ որակ կամ չկային համապատասխան մասնագետներ, ովքեր կկատարեին աշխատանքը: Կարծիքին կից ներկայացնում ենք նաև համապատասխան լեզուներին տիրապետող

թարգմանիչների անձնագրային տվյալները և որակավորումը հաստատող փաստաթղթերը /լիցենզիա/, ինչպես որ պահանջվում էր մրցույթի կանոններով: Կարծիքին կից ներկայացնում ենք նաև 2020 թվականի նոյեմբերի 11-ի էլեկտրոնային նամակագրությունը Police TV Gnumner հասցեատիրոջ հետ:

Խնդրում ենք ըմբռնումով մոտենալ և չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ սա էլեկտրոնային գնման գործընթացին մասնակցության առաջին փորձն էր, իսկ օրենքը տարընթերցման հնարավորություն ունի, քանի որ հստակ նշում չկա այն մասին, որ բոլոր մասնակիցները պետք է շարունակեն մասնակցել գնման գործընթացին մինչև հաղթող մասնակցի հետ պայմանագրի կնքման պահը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գրավոր թարգմանության /Տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու տեսական քննության հարցերի թարգմանություն/ ծառայությունների ձեռքբերման նպատակով 21.01.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «…Արտոնագիր-թարգմանությունները պետք է կատարվեն մասնագիտական (տեխնիկական) թարգմանություններ կատարելու որակավորում և լիցենզավորում ունեցող անձանց կողմից…»:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ն:

iv. «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ն թիվ 1 հավելվածով՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.02.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես, ըստ գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջի Մասնակցի կողմից չի ներկայացվել մասնագիտական (տեխնիկական) թարգմանություններ կատարելու որակավորումները և լիցենզավորումները:

vi. Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և առաջարկել Մասնակցին մեկ /1/ աշխատանքային օր /մինչև 08.02.2021թ.-ը ժամը 18:00/՝ շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

vii. Հանձնաժողովի քարտուղարը policetv.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից նույնաբովանդակ ծանուցում է ուղարկել Մասնակցի as.translation@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի կատարել համապատասխան շտկումը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.02.2021թ.-ի թիվ 26/26/1971-2021 գրությամբ «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և

իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված

անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը:

Նույն կետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է նաև ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է…:

ՀՀ ոստիկանության կողմից 21.01.2021թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխա-

նությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից գրավոր թարգմանության /Տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու

տեսական քննության հարցերի թարգմանություն/ ծառայությունների ձեռքբերման նպատակով 21.01.2021թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 09.02.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես, ըստ գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջի Մասնակցի կողմից չի ներկայացվել մասնագիտական (տեխնիկական) թարգմանություններ կատարելու որակավորումները և լիցենզավորումները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և առաջարկել Մասնակցին մեկ /1/ աշխատանքային օր /մինչև 08.02.2021թ.-ը ժամը 18:00/՝ շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարը policetv.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից նույնաբովանդակ ծանուցում է ուղարկել Մասնակցի as.translation@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին, սակայն «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի կատարել համապատասխան շտկումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված **մեկ աշխատանքային օրյա ժամկետում**: Ընդ որում, օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը, իսկ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 31-րդ և 32-րդ հոդվածներ):

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ»*

ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար, սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը կիրառելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերը, այն է՝ ծանուցել է Մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը, այն է՝ 08.02.2021թ.-ին ժամը 18:00-ը, շտկել առկա անհամապատասխանությունները, գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված չէ որևէ դրույթ՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման համար նախատեսված մեկ աշխատանքային օրվա ժամանակային սահմանափակման մասին,

որպիսի պայմաններում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգով և Հրավերով սահմանված և Մասնակցին ընձեռնված շտկման հնարավորության ժամանակահատվածը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

ՀՀ ոստիկանության կողմից 21.01.2021թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.21-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 8.21) սահմանված

դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ արտոնագիր-թարգմանությունները պետք է կատարվեն մասնագիտական (տեխնիկական) թարգմանություններ կատարելու որակավորում և լիցենզավորում ունեցող անձանց կողմից:

Հանձնաժողովը, գնահատելով Մասնակցի կողմից ներկայացված հայտը, արձանագրել է, որ վերջինիս կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես, ըստ գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջի Մասնակցի կողմից չի ներկայացվել մասնագիտական (տեխնիկական) թարգմանություններ կատարելու որակավորումները և լիցենզավորումները, որպիսի պարագայում, Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և առաջարկել Մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, տվյալ դեպքում, Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին Մասնակցի համապատասխանության ստուգման համար Հանձնաժողովը կարող էր կիրառել միայն Կարգի 67-րդ կետի դրույթները (Հրավերով գնման ընթացակարգին մասնակցելու հայտով մասնագիտական (տեխնիկական) թարգմանություններ կատարելու որակավորումների և լիցենզավորումների ներկայացման պահանջ առկա չէ): Ուստի, այն դեպքերում, երբ առաջանում են Մասնակցի կողմից ներկայացված տվյալների նկատմամբ կասկածներ, Հանձնաժողովի կողմից չի կարող կիրառվել Կարգի 41-րդ կետով սահմանված՝ մասնակցին շտկման առաջարկ ներկայացնելու կարգավորումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 41-րդ, 67-րդ և Հրավերի 8.9-րդ ու 8.21-րդ կետերով սահմանված պահանջներից:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.02.2021թ.-ի թիվ 26/26/1971-2021 գրությամբ «Սոֆյա Սերոբյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/43 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**